



*Համարը N 266-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2019.04.03/23(1476) Հոդ.268  
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.04.2019*

*Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 25.03.2019  
Ստորագրման ամսաթիվը 26.03.2019  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒԻ, ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2019 թվականի N 266-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարման գործընթացով պայմանավորված պարտավորությունների մարմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2019 թվականի առաջին կիսամյակում հատկացնել 52 200.0 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում՝ 44,720.0 հազ. դրամ՝ պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման NN 3 և 4 հավելվածներում, N 5 հավելվածի NN 1 և 8 աղյուսակներում, N 11 հավելվածի NN 11.14 և 11.52 աղյուսակներում, N 11.1 հավելվածի NN 11.1.14 և 11.1.66 աղյուսակներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով հատկացված գումարը նվիրաբերության պայմանագրի հիման վրա տրամադրել Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. մարտի 26  
Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 25-ի N 266-Ն որոշման

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 25-ի N 266-Ն որոշման

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 25-ի N 266-Ն որոշման

Հավելված N 4

ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 25-ի N 266-Ն որոշման

Հավելված N 5

ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 25-ի N 266-Ն որոշման